



Ե/04. 2/9253-20

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 367 - Ա

«16» 03 2020թ.

ք.Երևան

**ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված կարգով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 740-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) պետական ռեզերվների գործակալության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Հիմք՝ ԱԻՆ պետակա ռեզերվների գործակալության պետ Ս. Շահինյանի միջնորդագիրը:

16.03.2020

ՖԵԼԻՔՍ ՑՈԼԱԿՅԱՆ

Подписано: TSOLAKYAN FELIKS 3701520046

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

Արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պետակա ռեզերվների գործակալության իրավական գործառույթների արդյունավետ իրականացման և վերլուծության մեծածավալ աշխատանքներով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել պայմանագրային հիմունքներով ներգրավել համապատասխան փորձագետ:

2. Փորձագետին ներկայացվող պահանջները

- 1) բարձրագույն կրթություն.
- 2) երկու տարվա աշխատանքային ստաժ.
- 3) ռուսերեն լեզվի ազատ տիրապետում.
- 4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մինչև մեկ տարի ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

Փորձագետը մեկ տարվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքներ, մասնավորապես՝

- 1) մասնակցություն իրավական ակտերի նախագծերի նախապատրաստմանը.
- 2) պետական պահուստի մասով իրավաբանական խորհրդատվության տրամադրում.
- 3) իրավական ակտերի հիմքերի պարզաբանում:

5. Հաշվետվությունների ներկայացման և դրանց գնահատման արդյունքների ամփոփիչ ժամկետները

Փորձագետը եռամսյակը մեկ ներկայացնում է հաշվետվություններ, որոնք գնահատվում են ըստ փուլերի՝ երեք ամիսը մեկ և ամփոփիչ փուլ:

Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

6. Աշխատանքի գնահատման չափանիշները

1. ոլորտին վերաբերվող իրավական ակտերի նախագծեր.
2. իրավաբանական խորհրդատվություն: